ՄԱՏԹԷՈՍ
ԵՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԻԶՄԻՐԼԵԱՆ

Համառօտ կենսագրութիւն
պատկերով

Կազմեց
ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

Հրատարակութիւն
«ՄԵՐ ՁԱՅՆԻ»

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպարան Ս. Ալազեանի.

Нахичеванъ н-Д.
Типографія С. Авакова.

1908.

ՄԱՏԹԷՈՍ
Ը.ԲԻՇՊԻՍԿՈՊՈՍ
ԻԶՄԻՐԼԵԱՆ

Համառոտ կենսագրութիւն
պատկերով

Կազմեց
ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

Հրատարակութիւն
«ՄԵՐ ԶԱՅՆԻ»

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպարան Ս. Անագիանի.

Нахичевань н-Д.
Типографія С. Анакова.

1908.

Ստաց
383



ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿ. ԻԶՄԻՐԼԵԱՆ.

ԼՍԵՑԻՆՈՒ ԳՐԱՏՈՒՆՈՒՆԵՐԸ
ՓՈՒՆՂԱՄԵՆՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՐՈՒԵԼԻԱՅԻ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Շիրվանզադէի կազմած Մատթէոս արքեպ. Իզմիրլեանի սոյն համառօտ կենսագրութիւնը «Մեր Ձայնի» մէջ մաս-մաս հրատարակելու համար սիրայօժարօրէն մեզ յանձնեց մեր անուանի վիպասանի բարեկամ պ. Ալէքսանդր Արէլեանը. բայց խմբագրութիւնս թերթի մէջ հրատարակելուց յետոյ նպատակայարմար գտաւ նոյն կենսագրութիւնը լոյս ընծայել առանձին գրքոյկով՝ ժողովրդի աւելի լայն խաւերին ծանօթացնելու համար մեր կաթուղիկոսական գահի ամենատաջին թեկնածուի կեանքին ու գործունէութեանը։

Շիրվանզադէն այս աշխատութիւնը կազմել էր Բագուի մի հրատարակութեան համար 1896 թուին, երբ սրբ. Իզմիրլեանը նոր էր հեռացել պատրիարքական գահից, բայց այն ժամանակուայ գրաքննական պայմաններն

արդեւք էին եղել այս գործը լոյս ընծայելուն։

1896 թուից յետոյ սրբ. Իշմիբլեանի կենսագրութեան վրայ գրեթէ ոչինչ չի մնում աւելացնելու, քանի որ նա 12 տարի մատնուած է եղել ակամայ անգործութեան, իբրեւ քաղաքական աքսորական նստած լինելով Երուսաղէմում։

«Մեր Ձայնի» խմբագրութիւն

ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ

1894 թուականի վերջերն էր, Կ. Պոլսի պատրիարքական դահը թափուր։ Սասունի կոտորածների թարմ տպաւորութեան ներքոյ Եւրոպայում հասարակական կարծիքը վրդովուել էր Տաճկաստանի վարչական անկարգութիւնների դէմ։ Կ. Պոլսի դեսպանական շրջաններում տաճկահայ ժողովրդի վիճակը տառջացրել էր յուզում և իրարանցում։ Դրեթէ տասնուհինգ տարի քնած հայկական հարցը նորից կենդանութիւն էր ստանում։ Երեք Եւրոպական զօրեղ պետութիւններ—Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան, կամենալով անտաչառ օրէն պարզել Սասունի կոտորածների բուն պատճառները, ամեն կերպ աշխատում էին ձեռք բերել

ճշգրիտ տեղեկութիւններ կատարուած դրժբաղդութեան մասին։

Չկար մի հասարակական մարմին կամ անձնաւորութիւն, որ կարողանար ներկայանալ իբրև տաճկահայ ժողովրդի նորագոյն վշտերի և կսկիծների թարգման, պաշտպանել նրա դատը և լինել անձնուէր միջնորդ իր ազգի և դիպլոմատիական աշխարհի միջև։ Տխուր հոչակ վաստակած Աշրգեան պատրիարքի շնորհով մի քանի տարի էր Կ. Պոլսի Ազգային ժողովը կորցրել էր իր ոյժն ու իրաւունքները և գրեթէ լուծուել։ Պատրիարքարանը զրկուել էր իր ազդեցութիւնից. թուլամորթ պատրիարքի հրաժարականից յետոյ, դռնը ժամանակաւորապէս յանձնուել էր տեղապահ Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեանին՝ մի ոգէտ և թոյլ եկեղեցականի, որ այնպիսի դժուար հանգամանքներում, կորցնելով իր գլուխը, կամայ թէ ակամայ դարձել էր տաճիկ կառավարութեան ձեռքում խաղալիք։ Անուանով գոյութիւն ունեցող Ազգային ժողովի լաւագոյն փոքրամասնութիւնը չփոթուել էր. երկիւղը ստիպում էր նրան դատապարտուել անգործութեան, իսկ ժողովրդի ա-

բիւնը սոսկալի ուրուականի պէս հալածում էր նրան, խայթելով խրախանչելի սիրտը և զրդելով սթափուել, վերջապէս, երկար ժամանակաց թմրութիւնից։ Մինչդեռ ամիրաներից և էֆէնդիներից բաղկացած մեծամասնութիւնը դեռ ևս ընթանում էր Աշըգեան եպիսկոպոսի հարթած ուղիով, գործելու միակ զէնք համարելով ասիական քծութիւնը և շողոքորթութիւնը սուլթանի գահի առջև։

Ահա այդ խառն ու դժուար հանգամանքներում մի օր յանկարծ հեռապիրը լուր է բերում, թէ Կ. Պոլսի պատրիարքական գահի համար ընտրուած է Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեանը։ Հարկաւ, այս անունը շարժում է ընդհանուր հետաքրքրութիւն, և ամէն մի հայի գլխում հարց է ծագում՝ արդեօք ինչպէս կը դաշտանէ տաճկահայերի դատը նոր պատրիարքը։ Ռուսահայերի համար այդ ժամանակ Իզմիրլեանի անունը անծանօթ չէր. ընդամենը տարի ու կէս էր անցել այն օրից, երբ Իզմիրլեանը Էջմիածնի հանդիսում ընտրուեց կաթողիկոսական գահի երկրորդ թեկնածու։ Նրա անունը դեռ թարմ էր սուսահայերի յիշո-

գութեան մէջ։ Սակայն միայն այսքանը։ Դժուար թէ գտնուէին մի քանի հայեր, որ ճանաչէին այդ եկեղեցականի անցեալը, այն մարդու, որ կարճ ժամանակ անցած վաստակից այնքան մեծ հռչակ։ Մենք ենթադրում ենք, որ նոյն իսկ այժմ, երբ Իզմիրլեանն այդքան յայտնի է դարձել, ուսանողները չունին տեղեկութիւն նրա անցեալ կեանքի և գործունէութեան մասին։ Ահա ինչու մենք կաշխատենք ներկայ յօդուածով ծանօթացնել ընթերցողներին այդ հաղուագիւտ գործիչի վեթ հմտառօտ կենսագրութեան հետ, միևնոյն ժամանակ, կարելիին չափ, տեղեկութիւններ տալով նրա գործունէութեան մասին։

Իզմիրլեանի գործունէութիւնը բաժանւում է երկու խիստ որոշ ժամանակամիջոցների. մինչև պատրիարք դառնալը և պատրիարքութեան ժամանակ։ Խօսենք նախ նրա նախկին կեանքի և գործունէութեան մասին*)։

*) Հարկ ենք համարում հաղորդել, որ ներկայ կենսագրութիւնը կազմվեց, բացի մեր ձեռքի տակ եղած մասնաւոր տեղեկութիւններից, օգտուել ենք «Արաքս» հանդէսից, որի 1893 թուականի մի համարում տպուած է մի վերին աստիճանի հանգամանօրէն կենսագրութիւն, նաև Թիֆլիսի հայ լրագրներից։ Հեղ.

Հասարակ դերձակի զաւակ և հասարակ դերձակի թոռն Մատթէոս Իզմիրլեանը ծնուել է Կ. Պոլսում 1845 թուականի փետրուարի 12-ին։ Նրա մանկական անունն եղել է Սիմէօն, իսկ Իզմիրլեան ազգանունը ծագումն է առել Զմիւռնիա քաղաքից, ուստից գաղթել է Կ. Պոլիս նրա պապը երիտասարդ հասակում։ Սիմէօնի հայրը ունեցել է ութ զաւակ, որոնց մէջ Սիմէօնը վեցերորդն է։ Այդ ութ զաւակներից այժմ ապրում են երկուսը—Սիմէօնը, այժմեան Մատթէոս արքեպիսկոպոսը և Յակոբոսը, որ ներկայումս Կ. Պոլսում պարապում է ներկարարութեամբ և մեքենագործութեամբ,

Մանուկ Սիմէօնը իր նախնական կրթութիւնը ստացել է Պէզճեան կոչուած վարժարանում։ Այստեղից նա տանուչորս տարեկան հասակում տեղափոխուել է Գումգապուի Պողոսեան և Վարվառիսեան կոչուած ուսումնարանը, որ կառուցուած էր Պէզճեան Յարութիւն ամիրայի ծախքով և այն ժամանակ գտնուում էր Մկրտիչ Մէզպուրեանի գեկավարութեան տակ։

Աւարտելով իր ուսումնարանական կրթութեան ընթացքը, պատանի Սիմէօնը տա-

նութ տարեկան հասակում հրաւիրում է ուսուցչի պաշտօնով Կ. Պոլսի Միջագիւղ թաղի ս. Թարգմանչաց ուսումնարանը։ Այստեղ հազիւ երկու տարի ուսուցչութիւն անելուց յետոյ, Իզմիրլեանը 1864 թուականին նոյն թաղի եկեղեցում ձեռնադրւում է սարկաւագ։ Բնաւորութեամբ հեզ, ձգտումներով բուն քրիստոնեայ, նա զգում է, որ հոգևոր ասպարիզում միայն կարող է իրեն համապատասխան գործունէութիւն գտնել։ Եւ ահա, հինգ տարի անցած, այն է՝ 1869 թուականի ամառը, քսանուչորս տարեկան երիտասարդը, արհամարհելով աշխարհային հաճոյքները և կեանքի սնոտի փոթորիկները, ձեռնադրւում է վարդապետ Միջագիւղի թաղական եկեղեցում Յովհաննէս եպիսկոպոս Կապուտիկեանի ձեռքով, ընդունելով Մատթէոս անունը։ Նոյն տարին նա ստանում է գաւազանակրի իրաւունք։ Լինելով վերին աստիճանի ուսումնասէր, նա աշխատում է իր ուսման թերութիւնները լրացնել անընդհատ ընթերցանութեամբ։ Նա ուսումնասիրում է հին և նոր հայ գրականութիւնը, իր ազգի պատմութիւնը, եկեղեցու ան-

ցեալը և ներկան։ Ապագայում այդ գրական-տական և եկեղեցական հմտութիւնը նրա հասարակական գործունէութեանը մեծ ծառայութիւններ է մատուցանում։

1869 թուականին Մկրտիչ եպիսկոպոս Արիմանը (վերջը ս. Էջմիածնի կաթուղիկոս) ընտրւում է Կ. Պոլսի պատրիարք և գաւառից տեղափոխւում է սուլթանների մայրաքաղաքը, ուր հայ հոգևորականները երկու կուսակցութիւնների բաժանուած, այդ ժամանակ միմեանց միան էին ուտում։ Ժողովրդական մարդը բնականաբար հանդիսանում է ժողովրդական իրաւունքների պաշտպան, գլուխ կանգնելով այն կուսակցութեան, որ լինում է աւելի անկեղծ, աւելի լուսամիտ և աւելի ժողովրդասէր։ Այդ կուսակցութեան հոանդուն անդամներից մէկն է դառնում և երիտասարդ վարդապետ Իզմիրլեանը։ Մի օր դիպուածով մի ինչ-որ հասարակական խնդրի առիթով նա ներկայանում է նորընտիր պատրիարքին։ Նրա սուր ու կարուկ դատողութիւնները, ձայնի գրաւիչ հնչիւնը, խելացի պատասխանները Արիմանի վրայ գործում են խոր տպաւորութիւն և գրաւում նրան։

Պատրիարքը, յափշտակուելով երիտասարդ վարդապետով, հրաւիրում է նրան պատրիարքարան սեղանական քարտուղարի պաշտօնով։

Այդ լինում է 1870 թուականի յունուարի 14-ին, երբ Իզմիրլիանը հազիւ քսան ու հինգ տարեկան էր։ Կարճ միջոցում պատրիարքի քարտուղարը երևան է հանում իր մտաւոր հազուագիւտ ընդունակութիւնները թէ իրրև պաշտօնեայ և թէ իրրև հոգևոր և հասարակական գործիչ։ Դրաւելով ընդհանուր ուշադրութիւն, 1871 թուականի յուլիսի 23-ին ընտրւում է Ազգային Ժողովի անդամ։ Այդ օրից նրա համար բացուած է գործունէութեան ընդարձակ ասպարէզ, ուր նա յայտնւում է իրրև կորովի մտքի տէր, եռանդուն, անաչառ և անշահասէր մի հասարակական գործիչ։ Նա մասնակցում է Ազգային Ժողովի կատարած բոլոր նշանաւոր գործերի մէջ, ամէն տեղ ցոյց տալով ինքնուրոյն ոգի, անկախ ընտրութիւն և ազատ հայեացքներ։

Հազիւ մի տարի անցած, Իզմիրլիանը ընտրւում է նոր կազմուած Կրօնական Ժողովի անդամ և ատենադպիր, միևնոյն

ժամանակ Ռուսով պատրիարքի անձնական քարտուղար և Ազգային Ժողովի անդամ։ Այդ ժամանակները Ազգային Ժողովի և տաճկական կառավարութեան մէջ տեղի էին ունենում անընդհատ խռովութիւններ, որ յետոյ սուր կերպարանք ստացան Բրուսայի առաջնորդական և Բերայի գերեզմանատան խնդիրների առիթով։ Տեղի սղութեան պատճառով չենք կարող կանգ առնել այդ խնդիրների վրայ, որոնց լուծման մէջ մեծ մասնակցութիւն է ունեցել Իզմիրլեան։ Կասենք միայն մի քանի խօսք Բրուսայի առաջնորդական խնդրի մասին, որովհետև այստեղ դեր է կատարել այն մարդը, որ վերջը բաղդի բերմամբ նստեց Կ. Պոլսի պատրիարքական գահի վրայ, իբրև յաջորդ Իզմիրլեան պատրիարքի։

Այդ մարդն է Բարդուղիմէոս եպիսկոպոս Զամչեան, որ այն ժամանակ Բրուսայի թեմական առաջնորդն էր և մեծ անախորժութիւններ էր պատճառում թէ Ազգային Ժողովին և թէ պատրիարքարանին իր ըմբոստ վարմունքով և անհաշտ բնաւորութեամբ։ Բանն այն է, որ Սահմանադրութիւն կոչուած ազգային իրաւունքների

գործադրութիւնը. իբրև մի նոր և չտեսնուած բան, այդ ժամանակները գաւառների մէջ հանդիպում էր մեծ խոչընդոտների։ Ժողովուրդը, իր տգիտութեան պատճառով, չէր ըմբռնում այդ իրաւունքների բուն իմաստը, և այդ տգիտութեանը նպաստում էին հոգևորականները, որոնք իրենց անձնական շահերը կապուած էին համարում Սահմանադրութեան ոգու թուլացման հետ։ Այդ տեսակ տգէտ և խստամսէր հոգևորականներից էր և Բրուսայի առաջնորդ Բարդուղիմէոսը։ Մի զարմանալի յամառութեամբ այդ մարդը ոչ միայն չէր ուզում գործադրել Սահմանադրութեան պահանջները, այլ և ձգտում էր ձգել երկպառակութիւն հայ ժողովրդի և հայ պատրիարքարանի մէջ։ Կային մարդիկ Բրուսայի հասարակութեան մէջ, որ հասկացել էին Բարդուղիմէոսի հոգին և հակառակում էին նրա ըմբռնութեան, և այդ ապերախտ առաջնորդի շնորհով ժողովուրդը բաժանուել էր երկու հակառակ կուսակցութիւնների— Բարդուղիմէոսական և Հակարարդուղիմէոսական։

Պատրիարքարանը ձգտում էր զսպել յա-

մառ և ըմբոստ առաջնորդին, և չէր յաջողում։ Մի քանի անգամ Խրիմեանը կանչեց Բարդուղիմէոսին Կ. Պոլիս, որ գայ և անձամբ հաշիւ տայ իր արարքների մասին, բայց առաջնորդը մերժեց և չեկաւ։ Վերջապէս, պատրիարքարանը ստիպուեց դիմել տաճկական կառավարութեան օգնութեանը, և ըմբոստ եպիսկոպոսը ստիպմանական ուժով բերուեց Կ. Պոլիս, ուր նա ստիպուած եղաւ ներում խնդրել իր իշխանաւորներից։ Սակայն Ազգային Ժողովը ուշադրութիւն չդարձնելով Բարդուղիմէոսի ակամայ և կեղծ խոնարհման վրայ, կամեցաւ խնդիրը պարզել, և այս նպատակով Բրուսա ուղարկեց երկու լիազօր քննիչներ։

Այդ լիազօրներից մէկն էր Մատթէոս վարդապետ Իզմիրլեանը։ Հասնելով Բրուսա իր ընկերոջ հետ, որոշ սկզբունքներով տպորուած Իզմիրլեանը նախ և առաջ կարևոր է համարում բացատրել ժողովրդին Սահմանադրութեան ոգին, ապա կաղմում է գաւառական Երեսփոխանական, նաև Կրօնական և Քաղաքական Ժողովներ։ Ժողովրդին իր քարոզներով և յորդորներով նա ներշնչում է ինքնաճանաչութեան ոգի, թու-

լացնում է նրա մէջ կուսակցական թշնամութեան զգացումը, վերականգնում է խախտուած հաշտութիւնը և իր միսսիան ամենայն եռանդով ու պատուով կատարելուց յետոյ, վերադառնում է Կ. Պոլիս։

Այնուհետև Իզմիրլեանը ընտրում է անդամ մի ուրիշ քննիչ յանձնաժողովի, որ պէտք է պարզէր կաթողիկոսական յարաբերութիւնների խնդիրը։ 1873 թուականի յունուարի 29-ին նա սանում է Ծայրագոյն վարդապետի աստիճան, մի և նոյն ժամանակ նշանակուելով Իւսկիւտար թաղի ս. Կարապետ եկեղեցու քարոզիչ։ Իրրև քարոզիչ իմաստալի քարոզներով, խորհրդաւոր հայեացքներով և պերճախօսութեամբ շուտով նա վաստակում է իր հօտի անկեղծ յարգանքն ու սէրը։ Ժողովուրդը գրաւում է նրա պարզ, անպաճոյճ ժողովրդական լեզուով ասած քարոզներով։

Այդ միջոցներին Երեսփոխանական ժողովը Արիմեան պատրիարքի համաձայնութեամբ սկսում է զբաղուել Սահմանադրութեան վերաքննութեամբ։ 1873 թ. մարտ ամսին կազմուում է մի վերաքննիչ յանձնաժողով։ Անդամների թուումն է լինում նաև

Իզմիրլեան, որ իր խելացի նկատողութիւն-ներով պարզում է յանձնաժողովի համար շատ մութ կէտեր, ցոյց տալով Սանմանադրութեան արժանաւորութիւնները և թերութիւնները։ Սակայն, հանգամանքների բերմամբ, յանձնաժողովի գործունէութիւնը առժամանակ մնում է առանց որևէ հետևանքի...

Մի տարի անցած Բալքէսէրի Ազգային Փաւառական Ժողովը Իզմիրլեանին ընտրում է վիճակային առաջնորդ և դիմում է պատրիարքին, խնդրելով վաւերացնել այդ ընտրութիւնը և շուտով Իզմիրլեանին ուղարկել իր պաշտօնատեղը։ Այս առիթով Կ. Պոլսի Կրօնական Ժողովը վճռում է Իզմիրլեանին եպիսկոպոսութեան վկայագիր տալ։ Սակայն վրայ է հասնում պատրիարքական տաղնապը. զարթնում են մի քանի կարևոր և ընդհանուր ազգային նշանակութիւն ունեցող խնդիրներ և Իզմիրլեանը ստիպուած է լինում մնալ առժամանակ Կ. Պոլսում մինչև որ կըլուծուին այդ խնդիրները։

1873 թուականի հոկտեմբերի 2-ին Արիմեանը, համեմատաբար կարճատև պատրիարքութիւնից յետոյ, հրաժարական է

տալիս իր պաշտօնից։ Հետևեալ տարուայ ապրիլ ամսին նրա տեղ ընտրում է Ներսէս Վարժապետեանը, մի մարդ, որ այնքան բարձրացրեց պատրիարքական դահի նշանակութիւնը օտարազգիների աչքում։ Այդ օրից Իզմիրլեանը դառնում է անմոռանալի Ներսէսի ամենաեռանդուն աջակիցներից և խորհրդատուներից մէկը։ Ազգային հասարակական և եկեղեցական ամենադժուար խնդիրներ լուծելիս նա ցոյց է տալիս այնպիսի լրջամտութիւն, հեռատեսութիւն, նաև եռանդ և մարդուն ու ազնիւ ձգտումներ, որ շուտով դառնում է մի անհրաժեշտ և անփոխարինելի անդամ այն բոլոր յանձնաժողովների ու խորհուրդների, որոնց ձեռքին է լինում այդ խնդիրների պարզաբանութիւնը և լուծումը։

Սակայն անատաջանորդ մեացած բալբէսէրցիները հանգստութիւն չեն տալիս Իզմիրլեանին և շարունակ, խնդրագիր խնդրագրի եռեից ուղարկելով, ազերասում են նրան դալ իր վիճակը։ Մի և նոյն ժամանակ նրանք խնդրում են պատրիարքարանից, որ միջնորդէ Իզմիրլեանին եպիսկոպոս ձեռնադրելու։ Ներսէս պատրիարքը, լարգի-

լով ժողովրդի թախանձանքը, Իզմիրլեանի եպիսկոպոսութեան խնդիրը ենթարկում է Քաղաքական և Կրօնական ժողովների վարչութեան քննութեանը։ Ահա այստեղ յայտնում է բացարձակ, թէ ովքեր են Իզմիրլեանի իսկական թշնամիները։ Վարչութեան նախագահ Սիմէօն բէյը մի նիստում, ուր ներկայ է լինում և՛ ինքը Իզմիրլեանը, պարզապէս յայտնում է, թէ՝ թէև ինքը և իր հետ շատ աշխարհականներ սրտով ցանկանում են Իզմիրլեանին տեսնել եպիսկոպոսական աստիճանում, բայց բազմաթիւ թշնամիներ հակառակ են այդ բանին։ Այդ ասելով, նա համարձակ մատնացոյց է անում նիստում ներկայ եղող եպիսկոպոսներին ու վարդապետներին—Կրօնական ժողովի անդամներին։

Հայ հոգևորականութիւնը դարերից ի վեր սովոր է իր շրջանի ամենաարժանաւոր անդամներին ատելութեամբ և թշնամութեամբ միայն վարձատրել։ Իզմիրլեանը գիտէր, որ թշնամիներ ունի հոգևորականների մէջ, բայց չգիտէր, որ նրանք այդքան շատ են թուով։ Այժմ նա աչքով տեսաւ նրանց և ճանաչեց։ Նոյն բոպէին, ա-

ռանց երկար մտածելու, նա դուրս է գալիս վարչութեան նիստից ու մի քանի րոպէ անցած նորս է մտնում և նախագահի սեղանի վրայ է դնում Կրօնական Ժողովից ստացած եպիսկոպոսական վկայագիրը մի գրութեան հետ, որով հրաժարական է տալիս Բալըքէսէրի առաջնորդութիւնից։ Խան Ժողովի մէջ սկսւում է իրարանցում. Իզմիրլեանի թշնամիները ամօթահար են լինում, և երիտասարդ շնորհալի վարդապետը իր հոգու խորքում զգում է ցաւակցութիւն դէպի իր թշնամիների խումբը։ Ներսէս պատրիարքը ամէն ջանք գործ է դնում համոզել Իզմիրլեանին՝ յետ վերցնելու իր հրաժարականը, բայց անյողդողդ կամքի տէր մարդը մնում է անպրդուելի։ Սակայն 1876 թուականի սկզբներին Գէորգ Զորբորդ կաթուղիկոսը ինքնաբերաբար հրաւիրում է նրան էջմիածին։ Այստեղ Իզմիրլեանը մայիսի 13-ին եպիսկոպոս է ձեռնադրւում և երկու շաբաթից յետոյ վերադառնում է Կ. Պոլիս, ուր նորից սկսում է իր գործունէութիւնը աւելի սիրով ու եռանդով։

Մինչ այս մինչ այն՝ 1876 թուականի

վերջերին հրատարակւում է ռուս-տաճկական պատերազմը, և այդ օրից Ազգային Ժողովի ու պատրիարքի համար սկսւում է գործունէութեան մի նոր դարաշրջան։ Թէ ինչեր են կատարուել պատերազմի միջոցին Կ. Պոլսում, ինչ փոթորիկների է հանդիպել Ազգային Ժողովը և պատրիարքարանը— այդ մասին խօսելը մեզ շատ հեռու կը տանէր։ Պալով Իզմիրլեանին, իբրև Ազգային Ժողովի անդամ նա աչքի է ընկնում իր մտաւոր ուժով։ Նրա այդ ժամանակուայ արտայայտած հայրենասիրական ձգտումները, նրա իմաստուն և անկեղծ հոգով տածուած ճառերը արդարև արժանի են հիացման։ Որքան փքուն, արտաքուստ փայլուն, ներքուստ անբովանդակ են այդ ժամանակուայ հռետորների ճառերը Ազգային Ժողովի նիստերում, նոյնքան համեստ, անպաճոյճ, բայց և ներքին իմաստով հարուստ են եղել Իզմիրլեանի ատենաբանութիւնները։ Նա չի աշխատում իր խօսքի արտաքին շուքով փոշի փչել լսողների աչքին, չի ընկնում փայլուն խօսքերի ետևից։ Միայն է, որ ազդում է ամենի վրայ և այդ մտքի զօրեղութեան հետ զուգընթացաբար արտա-

ԼՈՒՍԱԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

յայտուղ անկեղծութիւնը։ Եռանդուն հայրենասիրութեան և ջերմ մարդասիրութեան զգացումների հետ Իզմիրլեանի մէջ անբաժան են եղել վիրին սատիճանի հեռատեսութիւնը և նուրբ քաղաքագիտութիւնը։

Պատերազմի ամենատաք միջոցներին գաւառներում սկսում են տաճկահայերի վշտերը և տանջանքները։ Տեղի են ունենում անասելի հարստահարութիւններ, ամեն կողմից պատրիարքարան են հասնում բողոքներ ու ազերագրեր։ Ազգային Ժողովը, պատրիարքարանի և Ներսէս պատրիարքի գործերը քանի գնում բարդուում են։ Լաւագոյն գործիչների կեանքը նեթարկուում է վտանգի, վատագոյնների համար բացուում է ինտրիգների, զրպարտութիւնների և... մատնութիւնների ասպարէզ։ Ի միջի այլոց, մատնութեան զոհ են դառնում և Ազգային Ժողովի անդամներից երեքը— Քրիստոսատուր Ղազարոսեան, Ստեփաննոս Փափազեան և Օգսէն Մաճառաբեան, որոնք ձերբակալուում են և դատապարտուում աքսորի։ Ներսէս պատրիարքը միջամտում է Բ. Դրան առջև և նրանց մի կերպ աքսորից ազատում, բայց բարձրագոյն հրամանով

արգելում է նրանց Ազգային Ժողովին մասնակցել։ Իզմիրլիանը, 46 երեսփոխանների ընկերակցութեամբ, մի օր առաջարկում է պատրիարքին միջամտել Բ. Դրան առջև, որ դաւաճանութեան զոհերեսփոխաններին նորից թոյլ տրուի ժողովի նիստերին մասնակցելու։ Եւ այս առիթով նա արտասանում է մի սքանչելի պաշտպանողական ճառ, ուր երևում է զղջյշ, բայց անշեղ համոզմունքների տէր քաղաքագէտի ոգին։

1877 թ. աշնանը ռուսաց յաղթական զօրքերը պատերազմի դաշտում հրաշքներ էին գործում։ Հիւսիսային առիւծը ճմլում, տապալում էր ամեն բայլում տաճիկ զօրքերին։ Յուսահատուած Մուխթար փաշան, կորցնելով իր զօրաբանակի մեծ մասը, գիմում է Կ. Պոլիս, խնդրելով նոր զօրքեր և ռազմամթերքներ։ Հայ ժողովուրդը, ոգեպնուած, տալիս է նիւթական օգնութիւն։ Բայց այդ բիչ է. կառավարութեանը մարդ է հարկաւոր, և նա ընկնում է նեզը։ Նա, որ միշտ արհամարհել էր իր հպատակ քրիստոնեաների ոյժը, վերջապէս, ճարահատուած, վճռում է դիմել նրանց օգնու-

թեան և զինուորներ է պահանջում։ Ազգային ժողովի մէջ ծագում է մի նշանաւոր խնդիր—զինուորութեան խնդիրը։ Տէրութիւնը հայերից զօրք է պահանջում—տալ, թէ չտալ։ Ժողովի անդամները դէմ չեն այդ պահանջին. կան այնպիսիներ, որ պատրաստ են նոյն իսկ իրենց հարազատ զաւակներին տալ զինուորական ծառայութեան։ Իրմիրլեանը այս առիթով արտասանում է մի զեղեցիկ ճառ, ապացուցանելով զինուորագրութեան խորհրդաւոր նշանակութիւնը հայերի համար, և այստեղ արտասանում է այն նշանաւոր դարձուածը, թէ «զինուորութենէ խուսափողն ազգաց ցանկին մէջէն կը ջնջուի»։ Սակայն երևան է գալիս մի դիլեմմա. «մերժել զինուորագրութիւնը ամարդութիւն է. տալ զինուորներ, կը նշանակէ ուղարկել նրանց հաւատակից քրիստոնեաների դէմ»։ Եւ արդարև, տաճիկ կառավարութիւնը պահանջում է զինուորներ, որ նրանց դուրս բերէ մի ազգի դէմ, որին միշտ սիրել է, պիտի սիրէ հայ ազգը, այն է—ռուսների դէմ։ Դիլեմման նեղն է ածում Ազգային ժողովին, մանաւանդ որ հայերից հաւաքուած զինուոր-

ները պէտք է պատերազմի դաշտն ուղարկուէին առանց մարզուելու, անփորձ։ Ազգային Ժողովը բացարձակ մերժում է կառավարութեան պահանջը։

1878 թ. օգոստոսի 4-ին Իզմիրլեան եպիսկոպոսն ընտրուում է երկրորդ ատենապետ Կրօնական Ժողովի, որի առաջին ատենապետն է լինում Խրիմեանը։ Այդ ժամանակ արդէն Ներսէս պատրիարքը հրաժարուած է լինում պատրիարքութիւնից։ Շատ են խնդրում և աղերսում Ներսէսին նորից բարձրանալ պատրիարքական գահը, մերժում է։ Վերջապէս, նա խորհուրդ է տալիս Ազգային Ժողովին ընտրել իր տեղ մի փոխանորդ, բացի սովորական պատրիարքական փոխանորդից, որի իրաւունքները սահմանափակ են լինում։ Ներսէսը առաջարկում է այդ երկրորդ փոխանորդին տալ de facto պատրիարքի իրաւունքներ, իսկ ինքը համաձայնուում է մնալ de jurè պատրիարք, մինչև որ Բ. Դուռը, որ այնքան արհամարհում է պատրիարքի խնդիրները, կը կամենայ ճանաչել նրա իրաւունքների ոյժը։

— Ո՞ւմ կը կամենայիք ձեր լիակատար

փոխանորդ ընտրուած տեսնել,—հարցնում են պատրիարքից։

Ներսէսը, առանց երկար տատանուելու, պատասխանում է.—Իզմիրլեանն սրբազանին։

Ազգային ժողովն ինքը համարում է Իզմիրլեանին ամենաարժանաւոր փոխանորդ և, հակառակ նրա բազմաթիւ թշնամիների ցանկութեան, 1879 թ. մարտի 9-ին տալիս է նրան իր բացարձակ քուէն։ Ներսէս պատրիարքը յատուկ նամակով շնորհաւորում է նրան։ Մատթէոս եպիսկոպոսը քանի-քանի անգամ համեստաբար հրաժարւում է այդ պաշտօնից, բայց վերջը զիջանում է ազգի պահանջներին և ընդունում։

Սակայն Բ. Դուռը չի ուզում Իզմիրլեանին պատրիարքի փոխանորդ ճանաչել, երբի շատ լաւ ծանօթ լինելով նրա աշխարհահայեցողութեանը։ Իզմիրլեանի ձեռները կաշկանդւում են, նա չի կարողանում գործել։ Հինգ ամիս շարունակ Բ. Դրան հետ կռիւ մղելուց յետոյ, նա համոզւում է, որ անհնարին է գործել, քանի որ Դուռը չի ընդունում նրա ընտրութիւնը։ Եւ հրաժարական է տալիս։ Ներսէսը, զիջանելով

ազգի թախանձներին, նորից բարձրանում է պատրիարքական գահը, իսկ Մատթէոս սրբազանին Ազգային Ժողովը շնորհակալութեան քուէ է տալիս իր թէև ապարդիւն, բայց անկեղծ հայրենասիրական կոուի համար Բ. Դրան դէմ։

Այստեղ պէտք է նկատել, որ 1879 թ. մարտին, երբ Ներսէս պատրիարքը, հիւանդութեան պատճառով, հեռանում է իր պաշտօնից, Ազգային Ժողովն ընդունում է «Հայկական խնդրի գործունէութիւնը հրատարակելու համար» մի յանձնաժողով, որի նախագահն է լինում Մատթէոս եպիսկոպոսը։ Մի քանի ամիս անցած, երբ Ներսէսը նորից ազգային գործերի ղեկն իր ձեռքն է առնում, այդ յանձնաժողովը բնականաբար հրաժարական է տալիս։ Սակայն հիւանդութիւնը ստիպում է Ներսէսին յաճախ Ազգային Ժողովի նիստերից բացակայ լինել, և այդ միջոցներին Ժողովին միշտ նախագահում է Իզմիրլեանը։

1881 թ. Իզմիրլեանը հրատարակում է մի ընդարձակ աշխատասիրութիւն «Հայրապետութիւն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու և Աղթամար ու Սիս»։

ցաւում ենք, որ մեր ձեռքը չի անցել այս աշխատութիւնը, որպէս զի մի գաղափար կազմէինք Իզմիրլեանի գրականական ընդունակութեան մասին։ Բաւականանում ենք առաջ բերելով «Արաքս» հանդիսի կենսագրողի խօսքերը այս գրքի մասին.

«Սոյն գործ 1288 փոքրագիր երեսներէ բաղկացեալ հատոր մէ և խորին հմտութեամբ կը ճառէ ընդհանրական Հայրապետի իրաւանց ու անոր ենթարկեալ երկու կաթողիկոսական աթոռոց յարաբերութեանց վրայ։ Մատթէոս եպիսկոպոսի սոյն գործը խուլ բողոք մէ Աղթամարայ ու Սիսի կաթողիկոսներուն ս. Էջմիածնայ Աթոռին նկատմամբ բռնած ըմբոստ ընթացքին դէմ և պատմական ու օրինական փաստերով մի առ մի կը գծէ այն պարտականութիւններ, զորս յիշեալ կաթողիկոսք ունին հանդէպ Ընդհանրական Հայրապետին և Նորին Օծութեան փոխանորդ՝ Կ. Պոլսոյ պատրիարքին»։

Բոլոր իր գործերի մէջ Իզմիրլեանը ցոյց է տալիս անշեղ օրինասիրութիւն և կար-

գապահութիւն։ Ինքը լինելով վերին ատիճանի պարտաճանաչ հոգևորական, ամենից էլ նոյնն է պահանջում։ Նրան վրդովեցնում է փոքրաւորների ըմբոստութիւնը մեծաւորների դէմ, երբ այդ ըմբոստութիւնը չունի որևէ զաղափարական հիմք, այլ առաջանում է ըմբոստի մեծամտութիւնից և ագիտութիւնից։

1886 թ. յունուարի 31-ին Իզմիրլեանն ընտրւում է Եգիպտոսի վիճակային առաջնորդ և մարտի 12-ին Կ. Պոլսից ճանապարհ ընկնելով 17-ին հասնում է իր պաշտօնատեղը։ Սկզբունքներով լինելով բուն ռամկավարական, Իզմիրլեանը միշտ և ամենուրեք պաշտպանում է ժողովրդի իրաւունքները։ Ահա ինչու Սահմանադրութեան բուն ոգին նրա մէջ գտել է մի անյողդողդ պաշտպան։ Հասնելով Եգիպտոս, նա անմիջապէս սկսում է գործադրել Սահմանադրութեան պահանջները, բայց այստեղ հանդիպում է տեղական ամիրաների և փաշաների ինքնակամութեանը։ Նա ստիպուած է լինում նրանց դէմ կռիւ մղել, ապացուցանել և վերականգնել ժողովրդի իրաւունքները եկեղեցական և հասարակական խնդիրնե-

բում։ Նա աշխատարկում է փաշաների և ամիրաների այն ու հարստութիւնը և մի օր, վերջապէս, կարողանում է նրանց խոնարհեցնել ընդհանրական իրաւունքների առջև։ Տեղական ժողովուրդը, հարկաւ, սկսում է սիրել նրան, դանելով նրա մէջ մի անկեղծ և անշահասէր պաշտպան։

Եգիպտոսում Իզմիրլեանը, ի միջի այլոց, զարթեցնում է Յակոբը Աշըգեան անունով ռուսահպատակ հայի կտակի խնդիրը։ Այդ մարդը մեռնելու ժամանակ կտակում է ազգային նպատակներով 60թ անչարժ կալուածներ, որոնք տարեկան 3000 եգիպտական ոսկի եկամուտ էին բերում։ Հանգուցեալի ազգականները թագցրած են լինում նրա կտակը։ Իզմիրլեանին յաջողւում է կտակը ասպարէզ հանել, բայց հիւանդութեան պատճառով հարկադրւում է շուտով վերադառնալ Կ. Պոլիս։ Կտակի խնդիրը նորից մնանում է։

Եգիպտոս գտնուած ժամանակ Իզմիրլեանը մի ընդհարում է ունենում այն ժամանակուայ պատրիարք Աշըգեանի հետ։ Մի ծանր յանցանքի համար նա մի ինչ-որ քահանայի զրկում է քահանայագործութիւնից։

Պատժուած քահանան դիմում է Պոլիս իր ազդեցիկ բարեկամների օգնութեանը։ Աշըգեանը, չկամենալով մերժել մի մեծ ազայի խնդիրը, հեռագրում է անձամբ Իզմիրլեանին, պատուիրելով շուտով վերադարձնել պատժուածին նրա փիլոնը։ Հէնց նոյն օրը երեկոյեան պատրիարքը հեռագրով ըստանում է Իզմիրլեանի լակոնական պատասխանը. «Ստացայ ձեր հեռագիրը. պաշտօնիցս հրաժարուում եմ»։ Այս կարճակ պատասխանը նեղն է գցում Աշըգեանին, որ անմիջապէս հեռագրում է Իզմիրլեանին, խնդրելով մնալ իր պաշտօնում և թողնելով քահանայի գործը նրա անօրինութեանը։

1889 թ. վերջերին Իզմիրլեանը, բժիշկների խորհրդով, Եգիպտոսից տեղափոխուում է Կ. Պոլիս և երկու տարի շարունակ այստեղից է վարում իր վիճակի գործերը։ Պոլիսը հանգստութիւն չի տալիս Իզմիրլեանին. աջ ու ձախ տեղում են նրա վրայ քաղաքական զրպարտութիւններ, շարունակ նրան կանչում են Բ. Դուռը հարցաքննելու։ Նրա տուած բացատրութիւնները գոհացնում են կառավարութեանը, և նա, վերջապէս, ազատուում է ձանձրալի և անախորժ

երթևեկից։

Այդ միջոցներին Իզմիրլեանը նորից ընտրւում է Կրօնական Ժողովի անդամ, բայց իբրև կառավարութեան աչքում կասկածելի անձ՝ բարւօք է համարում հեռու պահել իրեն ազգային բոլոր պաշտօններից։ Աշըգեան պատրիարքը թախանձում է նրան լինել Կրօնական Ժողովի անդամ, սակայն կառավարութիւնը չի հաստատում։

Աշըգեանը չի բողոքում, չի պաշտպանում նրան կառավարութեան առջև, կարծես լսօրէն հասկացնել տալով, թէ Իզմիրլեանի վրայ եղած կասկածները իրաւացի են։ Իզմիրլեանը հեռանում է հասարակական գործերից և, քաշուելով Իւսկիւտար, մնում է այնտեղ թաղական քարոզչի համեստ պաշտօնում։

1892 թուականի մայիսի 5-ին Իզմիրլեանը ընտրուեց Էջմիածնի կաթողիկոսական գահի համար երկրորդ կանդիտատ, ստանալով գրեթէ քուէների երեք չորրորդական մասը։ Երբ Մկրտիչ Եպիսկոպոս Խրիմեանը իբրև առաջին կանդիտատ Նորին Մեծութիւն ռուսաց Կայսեր կողմից կաթողիկոս հաստատուեց, Իզմիրլեանը առա-

ջին և միակ եկեղեցականը եղաւ տաճկահայերի մէջ, որ չվախեցաւ տաճկական կառավարութիւնից և Կ. Պոլսից հեռագրով շնորհաւորեց Վեհափառ Հայրապետին։

1891 թուականի վերջերին Ազգային Սահմանադրութիւն ասուած հիմնարկութիւնը խափանուեց։ Հետևեալ թուականի մայիսի 24-ին Օսմանեան կառավարութիւնը արգելից Սահմանադրութեան տարեդարձը, և այսպիսով պաշտօնապէս ջնջուեցին մի քանի տասնեակ տարիներ գոյութիւն ունեցող ազգային այս վերջին սահմանափակ իրաւունքներն էլ։ Տաճկաց տէրութիւնը գաւ մի հլու և ստրկահոգի հոգևորական Դիմաքսեան անունով և ինքնագլուխ բացմեցրեց Կ. Պոլսի գահի վրայ իբրև պատրիարքական տեղապահ։ Բայց հայ հասարակութեան միտքը սթափուել էր, և նա պահանջեց ապօրինի տեղապահից հոգալ ազգային ժողովի վերականգնման և նոր պատրիարք ընտրելու մասին։

խառն ժողով բայքայուած Կրօնական և Քաղաքական ժողովների անդամներից։ Այդ ժողովը զբաղուեց պատրիարքական ընտրութեան խնդրով։ Յայտնուեց, որ սուլթանի իրաւունքով թոյլ է տրւում ընտրել օրինական պատրիարք։ Առաջին ընտրական ժողովը տեղի ունեցաւ նոյեմբերի 25-ին։ Մասնակցում էին Կ. Պոլսում գտնուող եպիսկոպոսները, նաև քարոզիչ վարդապետները և եկեղեցիների աւագ երէցները, ընդամենը թուով 46 հոգի։ Այստեղ պատրաստուեց ընտրողական ցուցակը, ուր մըտան 15 եպիսկոպոսների անուններ։ Իզմիրլեանի անունը դրուեց ցուցակի ճակատին. նա ստացաւ 34 ձայն և հռչակուեց առաջին կանդիտատ։ Մնում էր, որ Քաղաքական Ժողովն էլ իր ձայնը տայ, և նա 15-ի ցուցակից ընտրեց հինգ անուններ։ Այստեղ ևս Իզմիրլեանին տրուեց առաջին տեղը։

Դեկտեմբերի 7-ին կազմուեց ազգային ընդհանուր ժողով Գաբրիել Նորատունկեանի նախագահութեամբ։ Ներկայ էին 76 ընտրողներ։ Միայն եօթ մարդ գտնուեց, որ սև քուէ տուեց Իզմիրլեանին։ Ձայների

այդ անգին բազմութեամբ նա ընտրուեց Թիւրքիայի հայոց պատրիարք։ Ընտրութիւնն ընդունուեց բուռն և երկարատև ծափահարութեամբ, որի ժամանակ Դիմաքսանը և իր մի քանի ազգականները ներքին խռովութիւնից կրծոտում էին իրենց շրթունքները։

Ժողովի որոշումով անմիջապէս յատուկ պատգամաւորութիւն գնաց Իսկիւտար Իզմիրլեանի բնակարանը, ընտրութեան մասին ծանուցանելու։ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց հայ ժողովրդի կողմից իրեն ցոյց արուած վստահութեան համար և ասաց, թէ սիրով ընդունում է պատրիարքի պատասխանատու պաշտօնը։ Անմիջապէս սկսուեցին ինտրիգներ նորընտիր պատրիարքի դէմ։ Դիմաքսանն եպիսկոպոսը, Եուսուֆեանը և այլ յետադէմներ ամեն ջանք գործադրեցին, որ Իզմիրլեանի ընտրութիւնը կառավարութեան կողմից չվաւերացուի, բայց, բարեբաղդաբար, արդարութիւնը այս անգամ յաղթող հանդիսացաւ. Իզմիրլեանը դեկտեմբերի 20-ին հաստատուեց իր պաշտօնում։ Ասում ենք, բարեբաղդաբար, որովհետև, ինչպէս մօտիկ

ապագան ցոյց տուեց, այդ բարդ և դժուար հանգամանքներում միայն Իզմիրլեանի պէս մի մարդ կարող էր կրել պատրիարքի ծանրը պաշտօնը։ Եւ նա կարճ ժամանակում ցոյց տուեց իր երկաթէ կամքը, անդրդուելի համոզմունքները և անկեղծ հայրենասիրութիւնը։

Դեկտեմբերի 26-ին Իզմիրլեանը Սահմանադրութեան վրայ արաւ իր ուխտը և ստանձնեց տաճկահայ ժողովրդի գործերի գլխաւոր ղեկը։ Ներսէս պատրիարքից յետոյ ժողովուրդը առաջին անգամ սկսեց հանգիստ շունչ քաշել, որովհետև Գում-Գափուի մէջ կար մի մարդ, որ չպիտի դաւաճանէր ազգին իր նախորդների պէս։ Հէնց առաջին քայլում Իզմիրլեանը ցոյց տուեց իր որոշ սկզբունքները։ Ուխտի ժամանակին նրա արտասանած հանդիսաւոր ճառը անկեղծ և անվեհեր հայրենասիրութեան գրաւականն էր։ Դժբաղդաբար այդ ճառի միայն բեկորներն են մեզ հասել, բայց հէնց այդ բեկորներից էլ կարելի է դաղափար կազմել այն ընթացքի մասին, որ վճռել էր բռնել նորընտիր պատրիարքը։ Հակառակ իր անարժան նախորդների սովորութեան,

Իզմիրլեանը չի կեղծում, չի շողոքորթում, չի խաբում ոչ իրեն, ոչ ազգին, այլ բացաբ-ձակ ասում է, թէ հայ ժողովրդի ներա հոգեւոր պետի աէրունական հաւատարմութիւնը չը պիտի կայանայ «կեղծ ու պատիր շողոքորթութեան մէջ, այլ ճշմարտութեան մէջ», թէ ինքը վճռել է չթաղցնել իր ազգի իսկական ցաւերը ոչ սուլթանից. ոչ համայն աշխարհից։ Անմիջապէս այդ ճառի բովանդակութիւնը թղթակիցները հաղորդում են երոպական մամուլին։ Իսկ մեծ պետութիւնների դեսպանները խկոյնեւթ խրնդրում են նրա թարգմանութիւնը և մեծ զոհունակութեամբ կարդում։

Սակայն խաւարասէր թշնամիները հանգիստ չեն մնում։ Այս անգամ նրանք վրճռում են «փորձիչ սատանայի» դեր կատարել, ինչպէս ասում է մի հայ լրագրի թղթակից։ Նրանք ուզում են փորով շլացնել Իզմիրլեանին, յուսալով, որ նրան կը ձգեն իրենց ազդեցութեան տակ, ինչպէս ձգել էին Յարութիւնին, Աշրգեանին, Դիմաքսեանին։ Ի միջի այլոց, մի հայ ամիրայ մարդ է ուղարկում պատրիարքի մօտ և ասում. «Սրբազան, դուք իբրև հայ ազգի

ներկայացուցիչ օտար պետութիւնների առջև, այսուհետև պիտի ապրէք շուքով. դուք կունենաք շատ ծախսեր. թոյլ տուէք այդ ծախսերն ընդունել իմ վրայ»։

— Ոչ, —պատասխանում է Իզմիրլեանը,— ես ժողովրդի ներկայացուցիչն եմ և ոչ առանձին անհատների, և ժողովուրդը ինձ կը պահէ իր համեստ տուրքերով։ Թոյլ տուէք ինձ ապրել պատրիարքարանի միջոցներով։

1895 թ. յունուարի 1-ին, կիրակի առաւօտեան, Գում-Գափուի Մայր եկեղեցում հաւաքուած հայերի մեծ բազմութիւնը առաջին անգամ Մատթէոս պատրիարքի բերանից լսում է, թէ հայ ժողովուրդը Էջմիածնի գահի վրայ կաթողիկոս ունի։ Մինչև այդ ժամանակ ոչ միայն Խրիմեանի հաստատման մասին ոչոք չէր կարողանում խօսել վախից, այլև Էջմիածնի անունը արտասանել։ Պատրիարքը արհամարհում է երկիւղը և բացարձակ յայտարարում է ընդհանուր կաթողիկոսի անունը։ Իսկ նախընթաց օրը նա ներկայացել էր սուլթանին, իր հետ առնելով Ալէքսէեան Գրիգորիս եպիսկոպոսին։ Դարձեալ մի հա-

մարձակ քայլ, որին միայն Իզմիրլեանի պէս մի անհրկիւղ մարդ էր ընդունակ, որովհետև Այէաթճեանը մի օր Մուշում մի թուրք կառավարչի ապտակ տալու համար աքսորուել էր Պոլիս։ Նոյն իսկ Կրօնական ժողովի ցանկից ջնջուել էր նրա անունը կառավարութեան հրամանով։ Բայց Կ. Պոլսի սարկահոգի հայ էֆէնդիներին աւելի զարմացում է պատճառում այն համարձակ, անկեղծ, ժողովրդի շահերին անձնուէր դրծիչի անվեհեր ոգով տարուած ճառը, որ արտասանում է Իզմիրլեանը սուլթանի առջև այն օրը, երբ ներկայանում է փոգիշահին։ Ընդունելութիւնից յետոյ, երբ Իզմիրլեանը դուրս է գալիս դահլիճից, հրաւիրւում է հիւրընկալութեան սենեակը։ Այստեղ մօտենում է նրան արարողապետ Միւնիրբէյը, ուզում է արտասանած ճառի բնագիրը, առնում առնում է սուլթանի մօտ և մի քանի բոպէ անցած, այլայլուած և բարկացած վերադառնալով, հրաւիրում է պատրիարքին՝ հեռանալ պալատից։ Բանն այն է, որ սուլթանը Իզմիրլեանի ճառի մէջ չի գտնում այն բծութեան և շողոքորթութեան նշոյլն անգամ, որոնց սովոր

էր տեսնել Աշըղեաններին և Դիմաքսեան-ների կողմից։

Նորից վերադառնում են Ներսէսի օրերը։ Նորից սկսում են հայ պատրիարքարանի և երոպական դեսպաններին մէջ վաղուց ընդհատուած յարաբերութիւնները։ Յունուարի 4-ին Իզմիրլեանը այցելում է Ռուսիայի, Ֆրանսիայի և Անգլիայի դեսպաններին, որոնք իրենց առաջին թարգմաններին պատրիարքարան էին ուղարկել Իզմիրլեանին շնորհաւորելու։ Հետևեալ օրն իսկ անգլիական դեսպան սրը Ֆիլիպ Բիրբին փոխադարձ այցելութիւն է դալիս պատրիարքի մօտ։ Տեսակցութիւնը տևում է մի ժամից աւելի։ Յունուարի 6-ին, Ծննդեան օրը, Իզմիրլեանը փաշինների միջից, հակառակ տաճկական կառավարութեան կամքի, հանում է կաթողիկոսական առաջին կոնդակը, որ Էջմիածնից ուղարկուել էր պատրիարքարան աւելի քան մի տարի առաջ։ Առաջին անգամ Պոլսի եկեղեցիներում կարդացւում է այդ կոնդակը, որի ընթերցումը արգելուած էր կառավարութիւնից։ Բերայի եկեղեցում ինքնարուղիս և միահամուռ ծափերը թնդացնում են տաճարի կամարները։

Կ. Պոլսի հայերին տիրում է ընդհանուր յուզում։ Ամենքը զգում են, թէ որպիսի արթուն և անձնուէր ղեկավար է բաղմած պատրիարքական գահի վրայ։

Բայց կան ուրիշ աւելի նշանաւոր գործեր, քան էջմիածնինը և կաթողիկոսի կոնդակները, և Իզմիրլեան նրանցով է զբաղուած գլխաւորապէս։ Յունուարի 9-ին պատրիարքը պաշտօնագրով հաղորդում է Բ. Դրան, թէ պէտք է պատրիարքարանն էլ մի պատգամաւոր քննիչ ուղարկէ՝ Սասունի քննիչ մանուածողովին մասնակցելու։ Այն պահին, երբ այդ պաշտօնագիրը Դրան է ուղարկւում, Միւնիր-բէյ արարողապետը գալիս է պատրիարքարան սուլթանի կողմից պատրիարքի հետ բանակցելու։ Տեսակցութիւնը տևում է 2 ժամ։ Միւնիրը գալիս է և՝ հետևեալ օրը։ Բայց այս անգամ Իզմիրլեանը ընդունում է նրան շատ սառն։ Այդ օրից պատրիարքի և կառավարութեան մէջ սկսւում է մի խուլ պայքար, որ շուտով դառնում է բացարձակ կռիւ...

Բայց Իզմիրլեանը աբդէն եւրոպական դեսպանների հետ կանոնաւոր յարաբերութեան մէջ է. նա կարող է, երբ կամենայ,

անձամբ բացատրել նրանց իր և տաճկական կառավարութեան մէջ սկսուող կռուի պատճառները և հարկաւոր դէպքում խնդրել նրանց օգնութիւնը։ Նա դիմում է դեսպաններին, յիշեցնում է Բերլինի դաշնադրութեան 61 յօդուածը, որի մասին շատ վաղուց էր չէր խօսում։ Նա անսպառ ոգևորութիւն է գտնում ժողովրդի համակրութեան մէջ։ Նա այժմ շրջապատուած է վստահելի և համակրելի խորհրդականներով։ Կան մարդիկ, որ կարող են նրա չափ անձնուիրութիւն ցոյց տալ հայոց խնդրի վերաբերմամբ։ Եւ այդ մարդիկ մի-մի սիւներ են նրա համար։ Իսկական գործիչի անշահասիրութեամբ նա արհամարհում է ամիրաների զօրաւոր բանակը, որի միակ դերն է եղել միշտ քծնել, միշտ կեղծել, միշտ շողոքորթել և յարգում է իսկական հայրենասէրների խորհուրդները։

Դեկտեմբերի 31-ին Եղրզի պալատից դրեթէ վանդուած Իզմիրլեանը, մի ամիս չանցած, հրաւիրուում է սուլթանի մօտ։ Այդ օրը փոդիշահի ծննդեան տարեդարձն էր։ Մատթէոսն ևս գնում է իր պարքը կատարելու, շնորհաւորութիւն մատուցանե-

լու։ Մինչ մեզ ազգերի կրօնական պետերը մնում են ընդունարանում, Իզմիրլեանը հրաւիրուում է սուլթանի սենեակը։ Պատրիարքը մնում է սուլթանի հետ երես առ երես և երկար խօսակցում են նրանք։ Սուլթանը համեստ հայ հոգևոր պետին բարեհաճում է նստեցնել իր մօտ։ Պարզ է, որ այստեղ մի բան կայ։ Բայց զօրեղ կամքի տէր մարդը չի շլանում փաղիշահի քաղցր վարմունքից, չի կաշառուում։ Սուլթանը դիմում է նրան և հարցնում. «Ի՞նչ խնդիր ունիք արդեօք»։

— Ոչինչ, ձերդ մեծութիւն. առ այժմ եկել եմ միայն ձեզ առողջութիւն մաղթելու,—պատասխանում է Իզմիրլեանը։

— Ես Միշնիը փաշային ուղարկել էի ձեզ մօտ,—ասում է սուլթանը, մեղմ ձայնով,—որ ինչ խնդիր ունիք, նրա միջոցով յայտնէք։

— Ձերդ մեծութիւն, ես բերանացի ոչինչ ասելիք չունիմ և ինչ որ պիտի ասեմ, արդէն գրաւոր պատրաստում եմ։

Սուլթանը կարծում է, թէ շատ-շատ պատրիարքը պիտի խնդրէ բանտարկուած հայերին ազատութիւն տալու։ Բայց որքան

մեծ է լինում նրա զայրոյթը մի քանի օր յետոյ, երբ Միւնիր փաշան ներկայացնում է նրան Իզմիրլեանի ընդարձակ տեղեկագիրը Հայաստանում կատարուած և կատարուող հարստահարութիւնների և բարբարոսութիւնների մասին։

Իզմիրլեանը առանձին շրջարերականով յայտնում է առաջնորդներին, թէ ոչոք չի կարող կառավարութեան հետ անմիջական յարաբերութիւն ունենալ հայկական խնդիրների մասին, բացի տեղական ընթացիկ գործերից։ Այդպիսով նա ուզում է տաճկահայերի դատն ամփոփել պատրիարքի իրաւասութեան մէջ և զօրեղացնել ազգի միակ ներկայացուցչի նշանակութիւնը։

Իզմիրլեանը գործում է անընդհատ։ Ընդայելով իր հիւանդոտ վիճակին, նա առաւօտից մինչև երեկոյ պատրիարքարանում նստած, անձամբ հսկում է բոլոր գործերին, ճաշում է պատրիարքարանին կից գտնուող Երուսաղէմատանը և պառկում է մի անշուք սենեակում։

Նորոգելով պատրիարքական յարաբերութիւնները Եւրոպական աշխարհական ներկայացուցիչների հետ, Իզմիրլեանը չի մո-

ռանում և եկեղեցական ներկայացուցիչներին։ Կաթոլիկների պատրիարք Աղարեանին նա արհամարհում է այն հիմնաւոր պատճառով, որ այդ մարդը գաղանի թշնամի է հանդիսանում հայկական խնդրին և հայ եկեղեցուն։ Այն ինչ՝ սիրով այցելում է յունաց պատրիարք Անթիմոսին։ Ընդունելութիւնը այնքան փառաւոր է լինում, որ զարմացնում է թէ հայերին և թէ յոյներին։ Անթիմոսի խնդրով Իզմիրլեանը մտնում է Ֆէնէրի մայր տաճարը՝ այնտեղ հաւաքուած յոյների խուռն բազմութիւնը օրհնելու։ Բարձրանալով ամբիոն, նա Ոսկէբերանի գահից արտասանում է մի փառաւոր ճառ, ուր նա խօսում է Օրթոդոքս և Լուսաւորչական եկեղեցիների համերաշխութեան մասին և նկարագրում «երկու քոյրերի» կրած միատեսակ պատմական տառապանքները։ Խրոխտ պատրիարքի գեղեցիկ ատենաբանութիւնը խոր տպաւորութիւն է անում հանդիսականների վրայ, և տաճարը թընդում է «զիթօ, զիթօ» (կեցցէ)-ներով։ Հետեւեալ օրը յունաց պատրիարքը շտապում է փոխադարձ այցելութեան և հանդիպում է հայոց պատրիարքի կողմից հաւասար

փառայեղ ընդունելութեան։

Մինչ մի կողմից Իզմիրլեանը գլուխուած էր Սասունի կոտորածների և ընդհանուր հայկական խնդրով, միւս կողմից չէր կարող անտարբեր մնալ դէպի բազմաթիւ բանտարկեալների վիճակը։ Սուլթանը տրամադիր էր մասամբ ազատել այդ խեղճերին միայն այն պայմանով, որ պատրիարքը այդ «ողորմութիւնը» խնդրէ նրանից։ Սակայն Իզմիրլեանը ոչ մի խնդիր «ողորմութիւն» չէ համարում, այլ—իրաւունք։ Նա դիմում է անգլիական դեսպանի միջամտութեանը, և մարտի սկզբին բանտարկեալ հոգևորականների մի մասին ազատութիւն է տալիս, իսկ Զատիկի տօներին արձակում են բանտերի և միւս հոգևորականները։ Զատիկ օրը տասներկու տառապեալ եկեղեցականների ներկայութեամբ Իզմիրլեանը խօսում է մի սրտառուչ ճառ նրանց կրած տառապանքների մասին։ Ժողովուրդը չի կարողանում զսպել իր արտասուքը...

Կառավարութիւնը պահանջում է, որ պատրիարքը տեղեկ բանտից արձակուած եպիսկոպոսներին և վարդապետներին հաւատարմութեան երդում անել։ Պատրիարքը

մերժում է, առարկելով, թէ նրանք բանտարկուած են եղել առանց որ և է յանցանք գործած լինելու։ Նա մերժում է և՛ ուրիշ մի շարք առաջարկութիւններ՝ այս կամ այն գաւառական առաջնորդին Պոլիս բերել տալու, միւսին պատժելու, երրորդին մի ուրիշ տեղ ուղարկելու և այլ բաների վերաբերմամբ։

Մայիսի 20-ին անգլիական դեսպանը առուկ պաշտօնագրով հաղորդում է պատրիարքին տաճկական Հայաստանի բարենորոգումների ծրագրի պատճէնը, մայիսի 25-ին Քերբին այցելում է պատրիարքին։ Տեսակցութիւնը տեւում է [illegible] ամ, և Իզմիրլեանը մի նոր վշտով յիշեցնում է դեսպանին իր ժողովրդի վշտերը։ Դեսպանը յորդորում է Իզմիրլեանին հանդարտուել և համբերութեամբ սպասել իր պաշտպանած դատի վերջին։

Չորս տարի էր Սահմանադրութեան հանդէսը չէր կատարուում։ Մայիսի 28-ին Իզմիրլեանը տարեդարձի օրը կատարեց այդ հանդէսը չը տեսնուած շուքով 20000 հայերի ներկայութեամբ ս. Փրկչի հիւանդանոցի դաշտում։ Պատրիարքն առաջարկեց Սահ-

մանագրութեան պահպանման բաժակը, Էջ-միածնի կաթողիկոսի և Գրիգորիս եպիս-կոպոս Ալէքթճեանի կենացները։ Հազարա-ւոր ամբոխի ներկայութեամբ նա արտա-սանեց մի ոգևորուած ճառ, որ շատերի աչքերից կորզեց բուռն արտասուք։

Յունիսի ընթացքում ծագում է Կիլիկիա-յի կաթողիկոսութեան խնդիրը։ Իզմիրլեա-նը համարձակօրէն ասպարէզ է հանում Ա-լէքթճեան եպիսկոպոսի թեկնածութիւնը և պաշտպանում մինչև վերջը։ Պաշտպանում է այն հոգևորականին, որի դէմ էր ոչ միայն տաճիկ կառավարութիւնը, այլ և շատ բարձ-բաղիր հայ հոգևորականներ և աշխարհա-կաններ, որոնց թւում ամենամեծ նախա-տինքի արժանի են Աբրահամ եպիսկոպոս Մամիկոնեան, Նիկողոս եպիսկոպոս Ֆուր-նուզի և Յովհաննէս եպիսկոպոս Գազան-ճեան և ոմն վարդապետ Կիրակոս անունով։ Ազգային կենտրոնական վարչութեան Խառն ժողովը ստուգում է և հաստատում Ադա-նայում կատարուած ընտրութիւնները և Ալէքթճեանին կաթողիկոս հռչակում—հա-կառակ ինտրիգների և բանսարկութիւնների։ Իզմիրլեանը Իւսկիւտարի ս. Կարապետ ե-

կեղեցում յուլիսի 9-ին յայտարարում է այդ ընտրութիւնը, մի և նոյն ժամանակ յիշեալ չորս ըմբոստ հոգևորականներին հոգևոր պաշտօնէութիւնից զրկուած հռչակում։

Իզմիրլեան հանգստութիւն չունի։ Նա գրեթէ ամէն շաբաթ այցելում է այս կամ այն երոպական դեսպաններին, մէկին մի որևէ գործի մասին բացատրութիւն տալու, միւսին խնդրելու, երրոդին համոզելու։ Նրա ուշքն ու միտքը գրաւուած են իր ժողովրդի տառապանքներով։ Նա քուն չունի, ուտում է շտապով, որպէս զի իր թանկագին ժամանակը գործադրէ անթիւ խնդիրների վրայ։ Իսկ նա ֆիզիքապէս առողջ չէ, միայն իր հայրենիքի անսպառ սէրն է նրան այդքան եռանդ և ոյժ տալիս անընդհատ աշխատելու...

Սուլթանը յուլիսի կիսին, վերջապէս, երկար ձգձգելուց յետոյ, բացարձակ կերպով մերժում է ընդունել երոպական դեսպանների կողմից իրեն ներկայացուած բարեկարգութիւնների ծրագիրը իր ամբողջութեամբ։ Եւ Իզմիրլեանի հոգսերը բարդանում են։ Այս հանգամանքին աւելանում է

և Զէյթունի ապստամբութիւնը։ Իզմիրլեանը չգիտէ որ խնդրի մասին աշխատէ։ Մինչդեռ միւս կողմից ամեն օր, ամեն ժամ պատրիարքարան են տեղում նորանոր տեղեկագրեր կատարուող հարստահարութիւնների մասին։ Գանգատւում և բողոքում են ոչ միայն լուսաւորչական, այլ և կաթոլիկ ու բողոքական հայերը։ Իզմիրլեանի համար ազգի վերաբերմամբ կրօնի խտրութիւն չկայ։ Նա ամենին նայում է անաչառ հօր աչքով. ահա ինչու հեռագրեալ դառնում է համայն ազգի սիրելի հայրը այս բառիս ամենաընդարձակ նշանակութեամբ։ Մինչդեռ հայ կաթոլիկների անարժան պատրիարք Ազարեանը, հանգամանքներից օգտուելով, իր անձնական շահերի համար կրօնական անտեղի խնդիրներ է զարթեցնում, և այդ դառնում է մի նոր վիշտ Իզմիրլեանի համար։ Մի ուրիշ վիշտ է դառնում յունաց պատրիարք Անթիմոսի անսպասելի քարոզը, որով այդ հոգեոր պետը իր հօտին յորդորում է յուրա աչքով նայել հայերի վրայ։ Մի խիստ քարոզ, որի համար Անթիմոսը իր նախորդ Յովակիմ Գ.-ից, Ներսէս Վարժապետեանի ժա-

մանակակից պատրիարքից ստանում է յանդիմանութիւն։

Այդ բոլորին աւելանում է մի խոշոր և վշտալի դէպք—Կ. Պոլսի սեպտեմբերի 18-ի ցոյցը հայերի կողմից տաճիկ կառավարութեան դէմ։ Պոլսի փողոցները ներկւում են հայի արիւնով, հազարաւոր անմեղների դիակները սարսափ են ազդում Իզմիրլեանի վրայ։ Այն ինչ կառավարութիւնը այդ ցոյցի պատասխանատուութիւնը աշխատում է ձգել պատրիարքի վրայ։ Միւս կողմից լուր է տարածւում, թէ Իզմիրլեանին տապալելու դաւ է սարքւում, թէ վարձուած են մի քանի եպիսկոպոսներ, որոնք նրա տեղ պիտի դնեն Եղնիկ եպիսկոպոս Ապահունիին։ Ճշմարիտ է, յեսոյ այս լուրը, ինչպէս և ուրիշ շատ լուրեր, մատնացոյց եղեց, բայց կարևորն այն էր, որ դեռ կային Կ. Պոլսի հայերի մէջ Իզմիրլեանին հակառակ մարդիկ, հակառակ մի մարդու, որի առաջ խոնարհւում էր ամբողջ ազգն անխտիր։

Նոյեմբերի 17-ին անգլիական դեսպան սըր Ֆիլիպ Քերրին, Կ. Պոլիս վերադառնալուց յետոյ, տեսակցութիւն է ունենում սուլթանի հետ։ Խօսում են բացառապէս

հայկական խնդրի մասին, և խօսակցութեան մի կէտն էլ պատրիարքի մասին է լինում։ Սուլթանը գանգատւում է, թէ Իզմիրլեանը, որ իր ֆիրմանովն է հաստատուած պատրիարք, իրեն հակառակ է գործում, թէ նա գրգռում է ժողովրդին կառավարութեան դէմ։ Դեսպանը պատասխանում է, թէ Իզմիրլեանը երբէք սուլթանի և իր կառավարութեան հակառակ ընթացքի մէջ չի եղել և եթէ նա չլինէր, հաղիւ թէ հայ ժողովուրդը այնքան համբերէր... Պատրիարքը հետևում է իր ազգի ցոյց տուած ուղղութեանը։ Հարկաւ այս բացատրութիւնը չի գոհացնում կասկածամիտ սուլթանին, և պատրիարքը, որ առանց այդ էլ լրտեսներով շրջապատուած էր, ենթարկւում է ամենախիստ հսկողութեան։

Նոր 1896 թուականը բերում է ինտրիգների մի նոր շարք Իզմիրլեանի դէմ։ Էֆենդիների խումբը Յովհաննէս էֆէնդի Նուրեանի առաջնորդութեամբ փափագում է, որ պատրիարքը իր դիրքը փոխէ։ Եւ այս մտքով նրանք փորձում են հասարակական կարծիքը գրգռել Իզմիրլեանի դէմ։ Քիչ թէ շատ օրինաւոր լրագիրները ձեռնը-

պահ են մնում, իսկ «Լոյսի» և «Մանդու�մէի» պէս արհամարհուած թերթերը սը-պում են պատրիարքի դէմ հազար տեսակ բարբաջումներ։

Բայց պատրիարքը չի վհատում և իր հոգու խորքում ցաւում է այդ խեղճերի մասին։ Զրօրհնէքի տօներից անմիջապէս յետոյ պատրիարքարանում գումարում են Քաղաքական և Կրօնական ժողովները՝ պատ-րիարքի պաշտօնավարութեան դէմ նիւ-թուած դաւերի մասին խորհրդակցելու։ Իզ-միրլեանը, որ ներկայ է լինում այդ ժողո-վի բացումին, յայտնում է, թէ իրենից պահանջում են կամ «կարգի գալ», այսինքն փոխել իր բռնած քաղաքական ընթացքը, կամ հրաժարական տալ։ Բայց նա, ազգի կամքով ընտրուած լինելով, սիրով պատ-բաստ է ենթարկուել միայն ազգի տնօրի-նութիւններին, թող ուրեմն ժողովը վճռէ՝ արդեօք պէ՞տք է նա մնայ պատրիարք, թէ ոչ։ Այս ասելով, Իզմիրլեանը ժողովից ան-միջապէս հեռանում է։

Երկու ժամ անցած՝ բոլոր ժողովական-ները միասին գնում են Իզմիրլեանի բնա-կարանը և յայտարարում, թէ ամբողջ ազ-

զը գոհ է իր պաշտօնավարութիւնից, թէ չեն կարող ընդունել նրա հրաժարականը և թէ պատրիարքը պէտք է շարունակէ իր արդիւնաւէտ պաշտօնը։ Իզմիրլեանին տապալելու խնդիրը ջուրն է ընկնում։ Հայ էֆէնդիներն ու հոգևորականները համոզուում են, որ անկարելի է ազգի կամքի դէմ մաքառել։ Սակայն դեռ շարունակում են գործել։

Հանդամանքները փոխուում են և դառնում նպաստաւոր ազգադաւների խմբակի համար։ Իզմիրլեան պատրիարքի թագրիրները մնում են անպատասխան Բ. Դրան կողմից, և դա համարուում է հակառակորդների կողմից անաջողութիւն, որի պատճառը իրը թէ ինքը Իզմիրլեանն է, այն ինչ՝ քաղաքական աշխարհի հոգին է փչում ուրիշ կողմից։ Բայց Իզմիրլեանի մէջ մեծ է ազգային ինքնասիրութեան զգացումը։ Նա վիրաւորանքին շողոքորթութեամբ չի ուզում պատասխանել։ Նա դիմում է բացարձակ ցոյցերի և առաջին ցոյցը լինում է այն՝ որ մայիսին տաճկաց բայրամի տօնին չի գնում սուլթանին շնորհաւորելու։ Այս համարձակ քայլը կատաղեցնում է կառա-

վարական շրջաններին և մի նոր զայրոյթ պատճառում հայ էֆէնդիների ու կղերականների խմբակին։

Բայց կանգ առնենք։ Անհնարին է մանրամասն նկարագրել այն բոլորը, ինչ-որ արել է Իզմիրլեանը 1895 թուականի ընթացքում, նաև մինչև 1896 թուականի կէսը։ Միայն այդ մէկ եւ կէս տարում նա հանդիպել է այնքան փոթորիկների, որոնց չի հանդիպել և ոչ մի պատրիարք իր ամբողջ գործունէութեան ընթացքում, բացի Ներսէս պատրիարքից, այն էլ ռուս-տաճկական պատերազմի աղէտալի միջոցին։ Այնքան բազմաթիւ են պատրիարքարանի և տաճկական կառավարութեան միջև ծագած խընդիրները, որ չկայ նոյն իսկ ֆիզիքական հնարաւորութիւն բոլորը թուելու, բոլորի մասին խօսելու։

Բայց թէ որքան լուսաւոր, արդիւնալից, անկեղծ և անշահասէր է եղել Իզմիրլեանի գործունէութիւնը—յայտնի է ոչ միայն հայ ազգին, այլ և ամբողջ Եւրոպային։ Անշուշտ ապագայ պատմութիւնը մանրամասն կանգ կառնէ մեր տաճկահայ եղբայրների տասնուիններորդ դարու վերջին քառորդի

կեանքի վրայ և այդ ժամանակամիջոցի մէջ ասպարէզ եկած գործիչների շարքում անշուշտ առաջին տեղը կը շնորհուի Ներսէս Վարժապետեանին և Մատթէոս Իզմիրլեանին։

Յունիսի 11-ին տեղի է ունենում Վանի ազատալի Ջարդը։ Հազարաւոր հայեր զոհ են դառնում թուրք ամբոխի մոլեռանդութեանը։ Լուրը խոր ազդեցութիւն է անում Իզմիրլեանի հիւանդութեան չափ զգայուն սրտի վրայ։ Կրկին նա ընկնում է երոպական դեսպանների դռները, բայց... ամեն կողմից յուսահատական լուրեր և պատասխաններ... Միևնոյն ժամանակ, Դիմաքսեան և Բարդուղիմէոս եպիսկոպոսներից, Մկրեան քահանայից, Վահան վարդապետ Տէր-Մինասեանից և Գրիգոր Կարագեօղեան, Մէրիէմ-Դուլի, Կարապետ Փանոսեան, Անտոն Կէօչէ-օղլի և այլ աշխարհական ու հոգևորական տարկահոգիներից բաղկացած խումբակը աւելի ու աւելի է լարում իր մեքենայութիւնները այդի արժանաւոր պտի դէմ։ Վերջապէս, Իզմիրլեանը, յոգնած և ձանձրացած այդ բոլորից, զրեթէ բայքայուած առողջութեամբ վճռում է հրաժա-

բական տալ և տալիս է յուլիսի 22-ին, այն ժամանակ, երբ կրեատացիների խնդիրը միանգամայն նսեմացրած է լինում առանց այն ևս հետզհետէ մոռացուող հայկական խնդիրը։ Նրա հրաժարականը իրարանցում է ձգում թէ Կ. Պոլսի կառավարչական շրջանների և թէ եկեղեցական դեսպանների մէջ։ Նա վայելում է ահագին ժողովրդականութիւն ընդհանրապէս բոլոր հայերի և մասնաւորապէս Կ. Պոլսի հայերի մէջ, ուստի երկիւղ է զարթնում՝ մի գուցէ նրա հրաժարականը նոր գրգռում պատճառէ առանց այն ևս գրգռուած հայերին։ Մանաւանդ ընդդիմանում է Իզմիրլեանի պատրիարքական գահից հեռանալուն տաճկաց արդարադատութեան մինիստրը, որ կարծում է ուղղակի, թէ Իզմիրլեանի հեռանալը իսկոյն առաջ կը բերէ մեծ անկարգութիւններ հայերի մէջ։ Դեսպանները առաջարկում են հայ պատրիարքին մնալ իր պաշտօնում, առաջարկում է նաև ռուսաց դեսպան Նելիդովը։ Սակայն երկաթէ կամքի տէր մարդը մնում է անդրդուելի իր մի անգամ արդէն վճռած և տուած հրաժարականի վրայ։

Տաճիկ կառավարութիւնն ընդունում է Իզմիրլեանի հրաժարականը, և յուլիսի վերջերին սադրազամի բոյրութիւնով (հրաման) հայոց սահմանադրական ժողովները հրատարակւում են կազմալուծուած և հրամայւում է պատրիարքական տեղապահ ընտրել։ Եւ Նուբեան-Աշրգեան խումբը Իզմիրլեանի գահի վրայ բազմեցնում է Բարդուղիմէոս Զամչեան եպիսկոպոսին, և այսպիսով բացարձակապէս ծաղրում տաճկահայ ժողովրդի վշտերը և տառապանքները։

Առանձնացած Կ. Պոլսի Իսկիւտար թաղում, այնտեղ իր համեստ բնակարանում ողբում է իր հօտի վիճակը անզուգական հովիւը։ Մինչդեռ տաճիկ կառավարութիւնը տակաւին սարսափում էր նրանից։ Երեսուն-քառասուն լրտեսներ գիշեր-ցերեկ պաշարած էին նրա բնակարանը։ Վերջերը լուր տարածուեց, թէ տաճիկ կառավարութիւնը ուզում է Իզմիրլեանին աքսորել։ Այդ լուրերն արդարացան. Իզմիրլեանն աքսորուեց Երուսաղէմ։

Հայ Մշակոյթ

ԼՈՒՍԱՍՈՒՈՒ ԳՈՒՍԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ